Ն. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԻՋՃՈՒՂԱՅԻՆ ԲԱՎԱՆՍԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՎԱՆՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Տնտեսության սոցիալիստական սիստեմի պայմաններում օբյեկտիվ տնտեսական օրենքների ուսումնասիրությունն ու ճանաչումը էկոնոմիկայում տեղի ունեցող բազմաբարդ պրոցեսների վերլուծության և նրանց ուղղություն տալու անհրաժեշտ երաշխիք է։ Արդի տնտեսագիտության կարևորագույն խնդիրներից է տնտեսական օբյեկտիվ օրենքները ճանաչելու հիման վրա պրակտիկայում նրանց պահանջները կենսագործելու մեթոդների և ուղիների մշակումն ու կատարելագործումը։ Տնտեսական պրոցեսների ու երևույթների որակական բնութագրությունը առանց նրանց քանակական որոշակիության թերի կդարձներ էկոնոմիկայի զարգացման պրոբլեմներում կողմնորոշվելու, նրանց համապատասխան ուղղություն տալու մարդկանց կարողությունը։

Մարքսիստական տնտեսագիտության կարևոր առանձնահատկություններից մեկը երևույթների ուսումնասիրության որակական ու քանակական կողմերի օրգանական միասնությունն է։ Քանի որ տնտեսական օբյեկտիվ օրենքների գոյության սոսկ ընդունումը անբավարար է ժողովրդական տնտեսությունը գիտականորեն պլանավորելու և ղեկավարելու համար, արդի էտապում ավելի կարևոր նշանակություն է ստանում տնտեսական օրենքների պահանջները ճշգրիտ կերպով հաշվի առնելու մեթոդների ու ուղիների կատարելագործումը։ Այդ խնդրի կենսագործումը հնարավոր է երևույթների զարգացման օրինաչափությունները փոխադարձ կապի ու պայմանավորվածության, նրանց որակական ու քանակական կողմերը դիալեկտիկական միասնության մեջ դիտելու հիման վրա։ Տնտեսական օբյեկտիվ օրենքները ճանաչելու և նրանց պահանջները հաշվի առնելու ժամանակ վերոհիշյալ մեթոդի անտեսումը անցանկալի երևույթներ է առաջացնում՝ ժողովրդական տնտեսության մեջ։ ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումներում ժողովրդական տնտեսության զարգացման մեջ տեղ գտած թերությունների պատճառը համարվեց այն, որ «Տնտեսության պլանավորման ու ղեկավարման գործում թերագնահատվում էր տնտեսական օբյեկտիվ օրենքների գործողությունը, բացասական գեր խաղացին սուբյեկտիվիզմի դրսևորումները, առանձին ճյուղերի զարգացման համամասնությունների կամայական փոփոխությունները, տնտեսական մի շարք լուծումների տնտեսագիտորեն թույլ հիմնավորումը»[1]։

Արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը օբյեկտիվ հիմք է ժողովրդական տնտեսության զարգացումը կանխատեսված պլանով վարելու համար։ Պլանաչափ զարգացման օրենքի պահանջներին համա-

---

1 «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թթ. հնգամյա պլանի ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվները», «Հայաստան», 1966, էջ 9։

պատասխան երկրի էկոնոմիկայի առաջընթացը պլանավորելու համար անհրաժեշտ է համակողմանիորեն ուսումնասիրել հասարակական վերարտադրության ընթացքում տեղի ունեցող փոխադարձ կապերն ու համամասնությունները։ Ժողովրդական տնտեսության զարգացման գիտականորեն հիմնավորված պլաններ մշակելու համար վերարտադրության համամասնությունների ու ճյուղերի միջև գոյություն ունեցող կապերի խորն ու բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտության մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Արտադրության առանձին ճյուղերի բոլոր պլանները պետք է խստիվ կերպով համաձայնեցված, կապակցված լինեն միմյանց հետ և միասին կազմեն այն միասնական տնտեսական պլանը, որի կարիքն այնքան զգում ենք»[2]։

Սոցիալիստական արտադրության մասշտաբների մեծացմանը զուգընթաց ավելի կարևոր նշանակություն է ստանում ժողովրդատնտեսական համամասնությունների ու միջճյուղային կապերի վերլուծությունը։ Առանց ժողովրդատնտեսական գլխավոր համամասնությունների և միջճյուղային կապերի խորն ու բազմակողմանի ուսումնասիրության անհնարին կլիներ մշակել գիտականորեն հիմնավորված պլաններ ժողովրդական տնտեսության զարգացման համար։ Պլանաչափորեն զարգացող սոցիալիստական արտադրությանը ներհատուկ է ժողովրդական տնտեսության համամասնորեն զարգացումը։ Վ. Ի. Լենինի դրույթն այն մասին, որ «Մշտական, գիտակցորեն պահպանվող համամասնությունն իսկապես պլանաչափություն կնշանակեր...»[3], վճռական նշանակություն է ստանում արտադրողական ուժերի զարգացման մակարդակի բարձրացման և արտադրության ճյուղերի զարգացման ներկա պայմաններում։ Այդ կապերի ամրապնդումն ու բարդացումը պահանջում են, որ ավելի բարձր հիմքերի վրա դրվի ճյուղերի զարգացման տեմպերի ու համամասնությունների պլանային, գիտակցված կարգավորումը։

Միջճյուղային կապերի ծավալումն ու բարդացումը պայմանավորված է տեխնիկական առաջադիմության ազդեցությամբ։ Օրինակ, երբ քարածխի արդյունահանման մեջ հիմնականում կիրառվում էր ձեռքի աշխատանքը, մեքենաշինության հետ ունեցած նրա կապերը աննշան էին և այդ ճյուղերի զարգացման համամասնության հարցը պրակտիկ նշանակություն չուներ։ Քարածխի արտադրության և մեքենաշինության զարգացման տեմպերի ու համամասնությունների պլանավորման անհրաժեշտությունը թելադրվում է նրանց միջև կապերի ուժեղացումով, քարածխի արտադրության մեջ մեքենական տեխնիկայի ավելի ու ավելի մեծ չափով օգտագործումով։ Այժմ գյուղատնտեսության արտադրության բարձրացումը սերտորեն կապված է նրա և մեքենաշինության ու քիմիայի արտադրական կապերի ծավալման հետ։ Մի խոսքով, արտադրության տեխնիկայի ու տեխնոլոգիայի զարգացումը գնալով ավելի մեծ նշանակություն է ստանում ժողովրդական տնտեսության ճյուղերի զարգացման համամասնությունների սահմանման գործում։ Կ. Մարքսը նկատի ունենալով համամասնությունների սահմանման գործում տեխնիկայի դերը նշել է. «...այն համամասնությունները, որոնցով կարող է արտադրապրոցեսն ընդլայնվել, ոչ թե քմահաճորեն, այլ տեխնիկապես (պետք է լինի տեխնիկայով. տես ռուսերեն տեքստը—Շ. Մ.) են նախորոշվում»[4]։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, 1952, էջ 648։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, 1947, էջ 802։
4 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 2, էջ 50։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ համամասնությունների տնտեսական վերլուծության մեջ առաջնակարգ նշանակություն ունեն ժողովրդատնտեսական սինթետիկ ցուցանիշները։ Այդ հաշվարկները կատարվում են բալանսային սխեմայի հիման վրա բարդ տնտեսական հաշվարկների միջոցով։ Տնտեսական վերլուծությամբ ժողովրդատնտեսական սինթետիկ ցուցանիշների հաշվարկումը վերջին տարիներին կիրառվում է որպես բալանսային բարդ հաշվարկների սիստեմ աշխարհի բազմաթիվ երկրներում։ Անգլիայում և ԱՄՆ-ում այդ սիստեմը կոչվում է հասարակական հաշվառման, Ֆրանսիայում՝ ազգային հաշիվների սիստեմ, մեր երկրում՝ ժողովրդատնտեսական բալանս։

Սակայն բալանսային սիստեմը կոչված է ապահովելու ոչ միայն սինթետիկ ցուցանիշների վերլուծությունը, այլև արտադրության, սպառման, կուտակման հետ կապված տնտեսական վերլուծության բոլոր կողմերի հետ միասին ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքը, փոխանակության ու շրջանառության հետ կապված տնտեսական կապերը։ Այդ պրոբլեմները բացահայտվում են ժողովրդատնտեսական բալանսի, նյութական բալանսների և միջճյուղային բալանսի միջոցով։ Բալանսների այս սիստեմները փոխադարձորեն կապված են միմյանց հետ և ներկայացնում են ժողովրդատնտեսական միասնական սինթետիկ ցուցանիշների տարբեր մասերը։

Արտադրության զարգացման բարձր տեմպերն ու մակարդակը պահանջում են պլանավորման մեջ ավելի լայնորեն օգտագործել բալանսային մեթոդը։ Պլանավորման բալանսային մեթոդը կոչված է ընդլայնված վերարտադրություն ապահովելու համար փոխադարձորեն համաձայնեցնելու ժողովրդական տնտեսության ճյուղերի ու համամասնությունների զարգացումը։ Բալանսային մեթոդը ոչ միայն փոխադարձ կապված տնտեսական պրոցեսների՝ արտադրության ու սպառման, արտադրության ծավալի ու տվյալ արտադրանքի պահանջարկի, բնակչության եկամուտների ու ծախսումների և այլ համամասնությունների քանակական համապատասխանեցման միջոց է, այլ ամենից առաջ տնտեսական կապերի ու համամասնությունների վերլուծության հիման վրա կոչված է ապահովելու պլանաչափ զարգացման տնտեսական օրենքի պահանջը։

Ժողովրդական տնտեսության համամասնությունների սահմանման ու փոխադարձ կապերի վերլուծության գլխավոր մեթոդը պլանավորման բալանսային մեթոդն է։ Վերջինիս կատարելագործման աստիճանով ու օգտագործման մակարդակով էլ պայմանավորված է էկոնոմիկայի զարգացման գիտականորեն հիմնավորված պլանների մշակումը։

Ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման բալանսային մեթոդը լայնորեն օգտագործվել և օգտագործվում է պլանավորման պրակտիկայում։ Հասարակական վերարտադրության ընթացքի օրինաչափությունների ուսումնասիրության և ժողովրդական տնտեսության պլանավորման նպատակով օգտագործվող բալանսների սիստեմը կարևոր նշանակություն ունի ժողովրդատնտեսական համամասնությունների վերլուծության ու սահմանման, ժողովրդատնտեսական միասնական պլանի առանձին մասերն ու տարրերը փոխադարձորեն կապակցելու և կոորդինացնելու համար։ Դրսևորություն ունեցող բալանսների սիստեմը՝ աշխատանքային ռեսուրսների բալանսները, նյութական և ֆինանսական բալանսները, ինչպես նաև սոցիալիստական ընդլայնված

վերարտադրության գլխավոր համամասնությունները բնութագրող ժողովրդական տնտեսության բալանսը, պայմանավորում է ժողովրդատնտեսական միասնական պլանի կազմումը։ Սակայն էկոնոմիկայի զարգացման արդի էտապում գոյություն ունեցող բալանսների սիստեմը պլանային ղեկավարման պահանջները լրիվ կերպով չի բավարարում։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ սկզբունքային նշանակություն ունեցող փոփոխություններ են տեղի ունենում նյութական արտադրության բոլոր ճյուղերում։ Այդ պատճառով էլ ժողովրդական տնտեսության համամասնորեն զարգացման պրոբլեմը առաջնակարգ նշանակություն է ստացել պլանավորման տեսության մեջ։ ՍՄԿԿ ծրագրում նշված է. «Ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում անհրաժեշտ է խստիվ պահպանել համամասնությունը, վաղօրոք կանխել տնտեսական անհամամասնությունների առաջացումը, ապահովելով տնտեսական բավարար ռեզերվներ որպես տնտեսական զարգացման հաստատուն, բարձր տեմպերի, ձեռնարկությունների անխափան աշխատանքի, ժողովրդի բարեկեցության անընդհատ աճի պայման»[5]։ Ժողովրդական տնտեսության պլանաչափ, համամասնորեն զարգացման օրենքը ենթադրում է նաև հասարակական արտադրության կառուցվածքի համամասնությունների քանակական որոշակիություն։ Վերարտադրության պրոցեսի բազմերանգ բնույթը պայմանավորվում է բազմաթիվ համամասնությունների առկայությամբ, իսկ վերջինս անհրաժեշտ է դարձնում նրանց խորն ու համակողմանի ուսումնասիրությունը։

Ժողովրդական տնտեսության մեջ գոյություն ունեցող համամասնությունները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր տնտեսական կամ ժողովրդատնտեսական և ճյուղային։ Ժողովրդատնտեսական համամասնությունները բնութագրում են հասարակական արդյունքի, ազգային եկամտի, կուտակման ու սպառման, արտադրության առաջին և երկրորդ ստորաբաժանումների, բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի, արդյունաբերության ու գյուղատնտեսության հարաբերակցությունը։ Այլ խոսքով, ժողովրդատնտեսական համամասնությունները հասարակական վերարտադրության պրոցեսը բնութագրում են ամենաընդհանուր ձևով։ Համամասնությունների երկրորդ խումբը ընդգրկում է մանրամասը ճյուղային կտրվածքով՝ միջճյուղային, ներճյուղային և ներգործարանային համամասնությունները։ Վերոհիշյալ երկու խումբ համամասնությունները սերտորեն կապված են իրար հետ և պայմանավորում են միմյանց փոփոխությունները։ Միաժամանակ նրանք տարբերվում են իրենց վրա ազդող գործոններով, ընդգրկած պրոբլեմների շրջանակներով, զարգացման տենդենցով ու հաշվարկման մեթոդով։

Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության պրոցեսը բնութագրող ժողովրդատնտեսական համամասնությունների կառուցվածքային փոփոխությունների մի շարք օրինաչափություններ բացահայտվում և օգտագործվում են պլանավորման պրակտիկայում։ Այդ համամասնությունների և նրանցում տեղի ունեցող փոփոխությունների քանակային հարաբերակցությունները որոշվում են բալանսային հաշվարկների միջոցով, ժողովրդական տնտեսության

5 ՍՄԿԿ ծրագիրը, Հայպետհրատ, 1961, էջ 104։

հիմնական համամասնությունների՝ արտադրության ու սպառման, սպառման ու կուտակման, հասարակական ամբողջական արդյունքի առաջին և երկրորդ ստորաբաժանումների, նյութական արտադրության հիմնական ճյուղերի ուսումնասիրության գործում գլխավոր դերը պատկանում է ժողովրդական տնտեսության բալանսին։ Այն հնարավորություն է տալիս բացահայտելու սոցիալիստական ընդլայնված վերարտադրության հիմնական համամասնությունները։ Նրանում վերարտադրության պրոցեսը բնութագրվում է միայն ընդհանուր ձևով, քանի որ գլխավոր համամասնությունները տրվում են առանց մանրամասը ճյուղային կտրվածքի, որն այժմ անբավարար է ժողովրդական տնտեսության համամասնորեն զարգացումն ապահովելու համար։ Ժողովրդական տնտեսության բալանսում միջճյուղային կապերը ցույց են տրվում միայն խոշոր ճյուղերի մասշտաբով։ Մինչդեռ ժողովրդական տնտեսության զարգացման պլաններ կազմելու համար անհրաժեշտ է բացահայտել ու սահմանել համամասնություններ ոչ միայն խոշոր ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի միջև և այլն, այլև բոլոր այն ճյուղերի ու արտադրանքների միջև, որոնք առանձնացվում են ժողովրդատնտեսական պլանում։ Այդ խնդիրը որոշ չափով իրականացվում է նյութական բալանսների օգնությամբ։ Սակայն նրանցում ցույց չի տրվում արտադրանքի բաշխումը ըստ ճյուղերի, ամփոփ տվյալներ չեն ստացվում միջճյուղային կապերի վերաբերյալ։ Բացի այդ, նյութական բալանսները չեն ընդգրկում ժողովրդական տնտեսության բոլոր կապերը։ Արտադրանքի շատ տեսակների նյութական բալանսները ընդգրկում են երկրում տվյալ արտադրանքի արտադրության ծավալի 60 տոկոսից մի փոքր ավելի։ Նյութական բալանսները չեն ապահովում ժողովրդական տնտեսության զարգացման պլանում նախատեսվող համամասնությունների բալանսավորվածությունը։

Այսպիսով, գոյություն ունեցող բալանսների սիստեմի գլխավոր թերությունն այն է, որ նրանցում մեծ թվով ճյուղերի միջճյուղային կապերի վերաբերյալ մանրամասն տվյալներ չկան, իսկ առանց այդպիսի տվյալների գիտականորեն հիմնավորված պլաններ կազմել այժմ արդեն անհնարին է։ Նախկինում ժողովրդատնտեսական բալանսը հիմնականում վերարտադրության պրոցեսը նկարագրելու, իսկ նյութական բալանսները առանձին արտադրանքների քանակային հարաբերակցությունները սահմանելու նպատակ էին հետապնդում և ցույց չէր տրվում համամասնությունների որակական բնութագրությունը։ Այժմ հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման ժամանակակից խնդիրները պահանջում են այնպես կատարելագործել բալանսային մեթոդը, որ միասնական հաշվարկում հնարավոր լինի բնութագրել ինչպես ժողովրդատնտեսական համամասնությունները, այնպես էլ առանձին արտադրանքների արտադրության ու սպառման համամասնությունները ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի մասշտաբով։

Պլանավորման առջև դրվող այդ պահանջը այժմ կարող է բավարարել հասարակական արդյունքի արտադրության ու բաշխման միջճյուղային բալանսը։ Միջճյուղային բալանսի կարևորությունը ոչ միայն այն է, որ նրանում համակցվում են ժողովրդական տնտեսության բալանսի և նյութական բալանսների հատկանիշները, այլև գլխավորապես այն, որ նոր բովանդակություն է տրվում ժողովրդատնտեսական համամասնությունների սահմանմանը։

Հասարակական արդյունքի և ազգային եկամտի բալանսների համեմատությամբ միջճյուղային բալանսը ավելի մանրամասը տվյալներ է պարունակում ժողովրդական տնտեսության վերջնական սպառման, ազգային եկամտի օգտագործման և արժեքային կազմի տարրերի վերաբերյալ. Նրանում մանրամասը բնութագրվում է հասարակական վերարտադրության պրոցեսը, հատկապես արտադրությունը և սպառումը, ինչպես նաև արտադրական սպառման պրոցեսը։ Միջճյուղային բալանսը հնարավորություն է տալիս խորը վերլուծություն կատարել նյութական արտադրության ճյուղերի փոխադարձ կապերի մասին՝ ժողովրդատնտեսական մակարդակով, նկատի ունենալով նաև նրանց անուղղակի կապերը։ Այն ժողովրդատնտեսական ընդհանուր պլանի առանձին բաժինների օրգանական կապի ապահովման համեմատաբար հեշտ և ճյուղերի միջև ավելի ռացիոնալ համամասնությունների սահմանման լավագույն միջոց է։ Միջճյուղային բալանսի օգնությամբ ավելի արդյունավետ կերպով կարելի է իրականացնել պլանաչափ, համամասնորեն զարգացման տնտեսական օրենքի պահանջին համապատասխան լրիվ բալանսավորված ժողովրդատնտեսական պլանի կազմումը։

Միջճյուղային բալանսի կարևոր առավելություններից մեկն էլ այն է, որ հասարակական արդյունքի արտադրության ոլորտում առաջացող կապակցությունների հիման վրա միջճյուղային կապերի ու ժողովրդատնտեսական համամասնությունների պլանավորման գոյություն ունեցող մեթոդի հետ միասին այժմ հնարավոր է դարձել հեռանկարային պլանավորման համար ելակետ ընդունել վերջնական սպառումը և դրա հիման վրա հաշվարկներ կատարել նյութական արտադրության ճյուղերի զարգացման տեմպերի ու համամասնությունների վերաբերյալ։ Այդ է պատճառը, որ այժմ վերջնական արդյունքի նշանակությունը պլանավորման գործում զգալիորեն մեծացել է։ Վերջնական արդյունքը հասարակական ամբողջական արդյունքի այն մասն է, որը վերջնականապես դուրս է գալիս ընթացիկ արտադրության ոլորտից և օգտագործվում է ոչ արտադրական սպառման, կուտակման, ինչպես նաև աշխատանքի միջոցների ծախսումների փոխհատուցման համար։ Միջճյուղային բալանսի մոդելը հնարավորություն է տալիս վերջնական արդյունքի հիման վրա հաշվարկներ կատարել և որոշել անհրաժեշտ համամասնությունները ժողովրդական տնտեսության մեջ։

Որոշ տնտեսագետներ[6] պլանավորման ժամանակ վերջնական արդյունքը ելակետ ընդունելը համարում են ոչ ճիշտ և գտնում են, որ դա սպառողական մոտեցում է ժողովրդական տնտեսության զարգացման հարցերին։ Մ. Բորը գրում է, որ վերջնական արդյունքը ստանալու համար նախ և առաջ պետք է ճյուղերի արտադրանքի ծավալի պլան կազմել և դրա հիման վրա որոշել վերջնական արդյունքը։ Ուրեմն, բոլոր ճյուղերի արտադրանքի ծավալի հիման վրա պետք է որոշել վերջնական արդյունքի ծավալն ու կառուցվածքը և ոչ թե ընդհակառակը։

Այդ տեսակետի կողմնակիցները[7] գտնում են, որ վերջնական արդյունքի

---

6 М. З. Бор. Очерки по методологии и методике планирования. М., «Экономика», 1964, стр. 118.

7 Ուշագրավ է, որ այս տեսակետը բաժանողների թիվը պետպլանի սիստեմում աշխատողների մեջ մեծ է։ Եվ դա հասկանալի է։ Ժողովրդական տնտեսության զարգացման պլանները մշակվել և մշակվում են ելակետ ունենալով արտադրության ճյուղերի ծավալային ցուցանիշները։

հիման վրա արտադրության ճյուղերի զարգացման պլանների մշակումը ընդհանրապես մեթոդոլոգիական տեսակետից սխալ է, քանի որ այդ դեպքում թերագնահատվում է արտադրության որոշիչ գերը վերարտադրության պրոցեսում։ Նման ձևով հարցի մեկնաբանությունը համոզիչ չէ, քանի որ վերջնական արդյունքի հիման վրա ժողովրդական տնտեսության զարգացման պլանի մշակման ժամանակ ոչ միայն չի թերագնահատվում արտադրության առաջատար դերը, այլև որոշակի վերջնական սպառում ապահովելու համար նախատեսվում է արտադրության համապատասխան աճ։ Եթե ժողովրդական տնտեսության զարգացմանը սպառողական մոտեցում ցույց տրվեր, ապա կթերագնահատվեին, կամ կանտեսվեին արտադրության ընդլայնման, տեխնիկական առաջադիմության և աշխատանքի արտադրողականության բարձրացման հարցերը։ Մինչդեռ ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման ժամանակ վերջնական արդյունքը ելակետ ընդունելիս հաշվարկվում են նյութական արտադրության ճյուղերի ու համամասնությունների համապատասխան զարգացում՝ որոշակի վերջնական արդյունք ստանալու համար։ Հասարակական արտադրության վերջնական նպատակը սպառումն է, և որոշակի սպառում ապահովելու համար արտադրության համապատասխանորեն զարգացումը պլանային սոցիալիստական տնտեսության կարևոր առավելություններից մեկն է։ Այս տեսակետից ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման ժամանակ հասարակության պահանջմունքները ելակետ ընդունելը կնպաստի արտադրության ու սպառման օրգանական միասնության ապահովմանը։ Վերջնական արդյունքի հիման վրա արտադրության զարգացման պլանավորման ժամանակ արտադրությունը հանդես է գալիս որպես ընդլայնված վերարտադրության հիմք, իսկ սպառումը՝ վերջնական նպատակ։ Ուրեմն վերջնական արդյունքի հիման վրա ժողովրդական տնտեսության ճյուղերի զարգացման պլանավորումը էկոնոմիկայի զարգացման գիտականորեն հիմնավորված պլաններ մշակելու կարևոր ուղի է, որպիսին մեզ ընձեռում է միջճյուղային բալանսը։

Սակայն դա չի նշանակում, որ պլանավորման ժամանակ չպիտի օգտագործվի ճյուղերի արտադրանքի ծավալների որոշման հիման վրա ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման սկզբունքը։ Այս տեսակետից մենք չենք բաժանում այն տնտեսագետների կարծիքը, որոնք արտադրության ծավալների որոշման հիման վրա վերջնական արդյունքի մեծության պլանավորումը համարում են սկզբունքորեն անընդունելի և գտնում են, որ ճշգրիտ է միայն վերջնական արդյունքից ելնելով ճյուղերի զարգացման պլանավորումը, քանի որ հասարակությանը հետաքրքրում է ոչ թե հասարակական ամբողջական արդյունքի մեծացումը, այլ որոշակի ծավալով ու կառուցվածքով վերջնական արդյունքը և առաջին հերթին սպառման ֆոնդը[8]։ Հասարակության անդամների նյութական ու կուլտուրական բարեկեցության մակար-

---

Իսկ երբ առաջ է քաշվում պլանավորման ժամանակ վերջնական արդյունքը ելակետ ընդունելու տեսակետը նրանք առարկում են։ Օրինակ, ՍՍՀՄ պետպլանի աշխատակից Ա. Բ. Դորովսկիխը գտնում է, որ միջճյուղային բալանսի տարբերակները պետք է հիմնավորվեն ոչ թե ազգային եկամտի (կամ վերջնական արդյունքի—Շ. Մ.) կառուցվածքային փոփոխությունների՝ այլ նյութական արտադրության կառուցվածքային տեղաշարժերի հիման վրա։ Տե՛ս «Вопросы экономики», № 10, 1966, стр. 154.

[8] Տե՛ս О. Пешехонов, С. Шаталин, Отраслевая структура общественного производства, М., «Экономика», 1965, стр. 39.

դակի բարձրացման տեսակետից առաջին հերթին կարևոր նշանակություն ունի ազգային եկամտի և վերջնական արդյունքի և ոչ թե հասարակական արդյունքի աճը։ Սակայն դա չի նշանակում, որ ազգային եկամուտն ու վերջնական արդյունքը կարող են աճել հասարակական արդյունքից անկախ։ Այդ պատճառով էլ հասարակական ամբողջական արդյունքի հիման վրա ազգային եկամտի ու վերջնական արդյունքի մեծությունը հաշվարկելու սկզբունքը չպետք է հակադրել ազգային եկամտի ու վերջնական արդյունքի մեծությունից ելնելով հասարակական ամբողջական արդյունքի պլանավորման սկզբունքին։

Հունգարացի տնտեսագետ Դ. Ցուկորը գտնում է, որ ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման ժամանակ որոշակի իմաստ ունի վերջնական սպառումից ելնելով ճյուղերի համախառն արտադրանքը սահմանելու մեթոդի կիրառումը։ Վերջնական սպառման հիման վրա մաթեմատիկական մեթոդներով հաշվարկներ կարելի է կատարել ժողովրդական տնտեսության ճյուղերի զարգացման տեմպերի ու համամասնությունների վերաբերյալ։ Սակայն չպետք է մոռանալ, գրում է Դ. Ցուկորը, որ հիմնական հարցը հանդիսանում է հենց վերջնական սպառման ճշգրիտ պլանավորումը, որի պատասխանը միջճյուղային բալանսը չի տալիս։ Բացի այդ, նկատի պետք է ունենալ, որ միջճյուղային բալանսի օգնությամբ, վերջնական արդյունքից ելնելով կարելի է որոշել ճյուղերի համախառն արտադրանքների ծավալը, նույն հաջողությամբ էլ ճյուղերի համախառն արտադրանքների ծավալի հիման վրա կարելի է որոշել վերջնական արդյունքի մեծությունը[9]։ Այստեղ փաստորեն առաջ է քաշվում ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման ժամանակ վերջնական արդյունքը ելակետ ընդունելու մեթոդը ճյուղերի համախառն արտադրանքի ծավալից ելնելով պլանավորելու մեթոդի հետ զուգորդելու հարցը։

Մեր կարծիքով, ժողովրդական տնտեսության պլանավորման ժամանակ վերջնական արդյունքի մեծությունը նյութական արտադրության ճյուղերի զարգացման տեմպերի ու համամասնությունների միջոցով որոշելու սկզբունքը պետք է համատեղել որոշակի մեծության վերջնական արդյունք ստանալու նպատակով արտադրության ճյուղերի համապատասխան զարգացման սկզբունքի հետ։ Այն կնպաստի ժողովրդական տնտեսության զարգացման պլանի օպտիմալ տարբերակի ընտրությանը։ Ժողովրդական տնտեսության զարգացման պլանի օպտիմալ տարբերակ ընտրելու համար անհրաժեշտ են հասարակական արտադրության կառուցվածքի մի շարք տարբերակներ։

Տնտեսագիտական գրականության մեջ առաջ է քաշվում նաև ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման ժամանակ բնակչության անձնական սպառումը ելակետ ընդունելու տեսակետը, որի կողմնակիցներին կարելի է համարել պլանավորման ժամանակ վերջնական արդյունքը ելակետ ընդունելու տեսակետի ավելի «ձախ» թևի ներկայացուցիչներ. Օրինակ, ակադ. Վ. Ս. Նեմչինովը նշել է, որ պլանավորման օպտիմալության չափանիշ սպառումը համարելու ժամանակ հնարավոր է դառնում պլանավորումը սկսել բնակչության սպառման ֆոնդի ցանկալի ծավալի ու կառուցվածքի որոշումից և հետո դրա հիման վրա որոշել պլանային ամբողջական համախառն

---

9 «Балансы межотраслевых связей», перевод с венгерского, под редакцией О. Д. Проценко, издательство «Статистика», 1966, стр. 114.

արդյունքի ու անհրաժեշտ կապիտալ ներդրումների ծավալն ու կառուցվածքը[10]։ Այս տեսակետը պաշտպանում են նաև Վ. Ս. Դադայանը[11], Լ. Յա. Բերրին[12] և այլն։ Նրանք գտնում են, որ եթե սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի նպատակը բնակչության նյութական ու կուլտուրական հարաճուն պահանջմունքների բավարարումն է, ապա պլանավորման ժամանակ ելակետ պետք է ընդունել անձնական սպառումը և համապատասխանորեն զարգացնել ժողովրդական տնտեսությունը[13]։

Նման հաշվարկներ, իհարկե, կարելի է կատարել ընթացիկ պլանավորման ժամանակ սպառման ֆոնդի կառուցվածքը լավագույն ձևով բնակչության գնողունակ պահանջարկին համապատասխան դարձնելու համար։ Այդ այն դեպքում, երբ հեռանկարային պլանով արդեն սահմանված է ազգային եկամտի կուտակման ու սպառման ֆոնդի հարաբերակցությունը։ Եթե հեռանկարային պլանով ազգային եկամտի կուտակման ու սպառման ֆոնդի հարաբերակցությունը չորոշվի, ապա սպառման ֆոնդի մաքսիմալ չափը ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման ելակետ ընդունելիս կարող է անհիմն կերպով կրճատվել կուտակման ֆոնդը, որի հետևանքով կդանդաղեն ընդլայնված վերարտադրության տեմպերը և վերջին հաշվով կուտակման ֆոնդի հետ միասին կկրճատվի նաև սպառման ֆոնդը։ Եթե ընթացիկ շրջանում ազգային եկամտի կուտակման ու սպառման ֆոնդի հարաբերակցությունը փոխվի հօգուտ առաջինի, բնակչության կենսամակարդակի բարձրացման տեմպերը կդանդաղեն, սակայն պայմաններ կստեղծվի այդ տեմպերի արագացման համար՝ նախորդ շրջանում արտադրության մակարդակի բարձրացման շնորհիվ։ Այսպիսով, հարցի էությունը ազգային եկամտի կուտակման ու սպառման ֆոնդի օպտիմալ հարաբերակցության սահմանումն է։ Այդ հարաբերակցությունը սահմանելիս նկատի պետք է առնվի նախ. արտադրության զարգացման տեմպերի և բնակչության կենսամակարդակի բարձրացման հարմոնիկ աճի ապահովումը, այնուհետև, ընթացիկ պլանավորման խնդիրները պետք է բխեն հեռանկարային շրջանում առաջադրված տնտեսական ու քաղաքական խնդիրների արդյունավետ կենսագործման պահանջից։

Այժմ պլանավորման պրակտիկայում սպառման ֆոնդի մեծությունը և կառուցվածքը վերջնականապես որոշվում են ժողովրդատնտեսական պլանի բոլոր հիմնական համամասնություններն ու ցուցանիշները մշակելուց հետո։ Դրա համար էլ տնտեսագետների մի մասը գտնում է, որ բնակչության սպառման ֆոնդի հիման վրա արտադրության զարգացման պլանավորումը հակասում է պլանավորման տեսությանը և պրակտիկային, անտեսվում է արտադրության դերը սպառման ֆոնդի առաջացման գործում։ Յա. Կրոնրոդը

---

10 «Вопросы экономики», № 7, 1964, стр. 82.

11 «Экономико-математические методы». Выпуск 1. «Народнохозяйственные модели, теоретические вопросы потребления». Издательство Академии наук СССР, 1963, стр. 148—152.

12 «Экономическая газета», № 3, 1965, стр. 6.

13 Այդ տեսակետը ակնառու կերպով տրված է հետևյալ ձևակերպման մեջ. «Ոչ թե վերջնական արդյունքն ու ազգային եկամուտը պետք է որոշվեն հասարակական համախառն արդյունքով, այլ ընդհակառակը՝ հասարակական համախառն արդյունքի ծավալն ու կառուցվածքը պետք է հաշվարկվեն վերջնական արդյունքի ծավալի ու կառուցվածքի տվյալների հիման վրա։ Տե՛ս «Методы планирования межотраслевых пропорций», под редакцией А. Н. Ефимова, Л. Я. Берри, издательство «Экономика», 1965, стр. 10.

գրում է. արտադրության առաջնայնությունը վերարտադրության փուլերի և հատկապես արտադրության ու սպառման փոխադարձ կապի մեջ նշանակում է, որ վերացականորեն տրված պահանջմունքների հիման վրա, արտադրության ու վերարտադրության ռեալ կապերից դուրս, անհնարին է ճիշտ կերպով որոշել սպառման ֆոնդը և նրա կառուցվածքը[14]: Այս տեսակետը բաժանում են նաև Ռ. Խաբիբին[15], Ն. Կովալյովը[16] և ուրիշներ:

Նրանք սպառման ֆոնդի հիման վրա ժողովրդական տնտեսության զարգացումը պլանավորելու կողմնակիցներին մեղադրում են սպառման ֆոնդը արտադրությունից անկախ, ինչ որ կատեգորիա դիտելու մեջ և գտնում են, որ հենց դա ինքնին հակասում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի պահանջին:

Մեր կարծիքով, գիտականորեն հիմնավորված պլաններ մշակելու համար կարևոր նշանակություն է ստանում արտադրության զարգացման տեմպերի, համամասնությունների ու մակարդակի որոշման հետ միասին բնակչության սպառման ֆոնդի մեծության ու կառուցվածքի վերաբերյալ հաշվարկների կատարումը: Այդ հաշվարկները կնպաստեն ժողովրդատնտեսական պլանի օպտիմալ տարբերակի ընտրությանը. Նկատի ունենալով ժողովրդի կենսամակարդակի բարձրացման վերաբերյալ առաջադրված խնդիրների կատարումը, հնարավոր է հաշվարկներ կատարել սպառման ֆոնդի ծավալի ու կառուցվածքի վերաբերյալ և դրա հիման վրա որոշել նյութական արտադրության ճյուղերի զարգացման տեմպերն ու համամասնությունները: Այնուհետև, այդ հաշվարկները կարելի է օգտագործել արտադրության ճյուղերի զարգացման հիման վրա կազմված պլաններում ճշգրտումներ մտցնելու համար՝ պլանի օպտիմալ տարբերակ ընտրելու նպատակով:

Կարևորն այն է, որ միջճյուղային բալանսի տնտեսական մոդելը հնարավորություն է տալիս նախապես սահմանված ծրագրով, պլանային ժամանակի համար, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ, ժողովրդական տնտեսության զարգացման պլանի բազմաթիվ տարբերակներ հաշվարկել: Հեռանկարային ժամանակաշրջանում առաջադրված տնտեսական ու քաղաքական խնդիրների կենսագործման համար անհրաժեշտ է նաև որոշակի մեծության ու կառուցվածքի վերջնական արդյունքի, այդ թվում սպառման ֆոնդի հիման վրա հաշվարկել ժողովրդական տնտեսության ճյուղերի զարգացման տեմպերի ու համամասնությունների պլանի տարբերակներ:

Միջճյուղային բալանսում ճյուղերի միջև կապերի մեխանիզմը հնարավորություն է տալիս հաշվարկել արտադրության կառուցվածքի առանձին տարբերակների արդյունավետությունը բնորոշող ցուցանիշներ: Այդ տարբերակները գրալիորեն պայմանավորված են արտադրության տեխնիկայի ու տեխնոլոգիայի փոփոխություններով և ընդհանրապես իրենց վրա կրում են տեխնիկական առաջադիմության ներգործությունը, որովհետև ժողովրդական տնտեսության մեջ միջճյուղային կապերի փոփոխությունները, առաջին հերթին, տեխնիկական առաջադիմության հետևանք են: Տեխնիկական առաջադիմության հետևանքով միջճյուղային կապերում տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորված են ճյուղերի միջև ծախսումների նորմատիվների փոփոխու-

[14] «Вестник статистики», № 3, 1965, стр. 14.
[15] «Вопросы экономики», № 5, 1966, стр. 42.
[16] «Вопросы экономики», № 10, 1966, стр. 76.

թյունների հետ։ Նյութական արտադրության ճյուղերում ծախսումների նորմատիվների վերաբերյալ միջճյուղային բալանսի տվյալները չափազանց կարևոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության պլանավորման համար։

Ժողովրդական տնտեսության պլանավորման համար խիստ անհրաժեշտ է հասարակական վերարտադրության պրոցեսում ծախսումների ու սպառման չափի որոշումը։ Գիտականորեն հիմնավորված պլանավորումը, անկախ ժողովրդական տնտեսության մեջ արտադրության միջոցների, սպառման առարկաների և աշխատուժի պահանջարկի որոշման, տեղի ունենալ չի կարող։ Այս տեսակետից, պլանավորման մեջ գնալով մեծանում է նորմավորման նշանակությունը։ Տնտեսագիտական գրականության մեջ պլանաչափ զարգացման տնտեսական օրենքի ուսումնասիրության ժամանակ նորմավորման հարցին անհրաժեշտ մեկնաբանություն չի տրվում։ Մինչդեռ, առանց գիտականորեն հիմնավորված նորմատիվային բազայի, հնարավոր չէ ճշգրիտ հաշվարկներ կատարել ինչպես միջճյուղային, այնպես էլ ընդհանուր տնտեսական համամասնությունների զարգացման վերաբերյալ։

Նորմավորումը կարևոր միջոց է հասարակության պահանջմունքները նրա ռեսուրսների հետ համաձայնեցնելու, առաջին հերթին արտադրության և արտադրական սպառման միասնությունը ապահովելու համար։ Որոշակի քանակային հարաբերակցության գոյությունը արտադրության ու արտադրական սպառման միջև պայմանավորված է նրանով, որ արտադրության պրոցեսը միաժամանակ արտադրական սպառման պրոցես է։ Բալանսների սիստեմի հետագա կատարելագործումը, հատկապես միջճյուղային բալանսը հուսալի բազա է նորմավորման բարելավման համար։ Հասկանալի է, որ պլանավորման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել տեխնիկական առաջադիմության և արտադրությունն կատարելագործման պրոցեսներն արտացոլող պրոգրեսիվ նորմաներ։

Միջճյուղային բալանսը հնարավորություն է տալիս հաշվարկել ժողովրդական տնտեսության ճյուղերում արտադրանքի թողարկման վրա խոշորացված խմբերով ծախսումների նորմաները ուղղակի և լրիվ ծախսումների ձևով։ Միջճյուղային բալանսի հենց այդ հատկությունն էլ հնարավորություն է տալիս ճյուղերի արտադրանքի թողարկման վրա կատարվող խոշորացված նորմաների հիման վրա հաշվարկներ կատարել պլանային ժամանակաշրջանում արտադրության ճյուղերի զարգացման տեմպերի ու համամասնությունների վերաբերյալ։ Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամասնությունների սահմանումը կատարվում է նրանց զարգացման տեմպերի միջոցով, քանի որ համամասնությունների փոփոխությունն իրականացվում է ճյուղերի ու ստորաբաժանումների զարգացման տեմպերի փոփոխության միջոցով։ Այսպիսով, միջճյուղային բալանսի տվյալների հիման վրա սահմանվում է թողարկվող արտադրանքի առանձին խմբերի վրա կատարված ծախսումների խոշորացված նորմաներ, որոնք հիմք են հանդիսանում ժողովրդական տնտեսության ճյուղերի կապերի ու համամասնությունների պլանավորման համար։

Հասարակական արդյունքի արտադրության ու բաշխման միջճյուղային բալանսը մանրամասը ճյուղային կտրվածքով բնութագրում է ճյուղերի միջև կապերը և ժողովրդատնտեսական ռեսուրսների օգտագործումը։ Այն լինելով տնտեսական վերլուծության կարևոր մեթոդ, բացահայտում է ճյուղերի միջև և ժողովրդական տնտեսության մասշտաբով գոյություն ունեցող կամ

սահմանվող կապերի բնորոշ համամասնությունները և հանգես է գալիս որպես բալանսային մեթոդի տարատեսակ ու ամենազարգացած ձև։ Միջճյուղային բալանսը ոչ միայն ժողովրդատնտեսական բալանսի բաղկացուցիչ մասն է։ Նրանում առաջին հերթին նպատակ է դրվում բալանսային տվյալների հիման վրա կոնկրետ հաշվարկներ կատարել պլանային ժամանակաշրջանի համար։ Այս կարևոր հատկությունն էլ նրան տարբերում է սովորական վիճակագրական բալանսից։

Միջճյուղային բալանսը նպաստում է բազմաճյուղ ժողովրդական տնտեսության զարգացման բալանսավորված ու օպտիմալ պլաններ կազմելուն ինչպես երկրի, այնպես էլ առանձին տնտեսական շրջանների մասշտաբով։ Նրանում ժողովրդական տնտեսության բալանսի հիմնական գծերը համատեղվում են մասնակի նյութական բալանսների հետ, որի հիման վրա հնարավոր է դառնում ժողովրդատնտեսական ընդհանուր համամասնությունների հաշվարկները կոնկրետացնել և արտացոլել առանձին ճյուղերի զարգացման պլաններում։

Միջճյուղային բալանսի հիման վրա հասարակական արտադրության պրոցեսը կարելի է արտահայտել հավասարումների սիստեմի միջոցով, որը հնարավորություն է տալիս հաշվարկներ կատարելու ժամանակ օգտագործել ժամանակակից էլեկտրոնային հաշվիչ տեխնիկան։ Դա ոչ միայն պլաններ կազմելու ժամկետները կրճատելու, այլև ժողովրդատնտեսական զարգացման պրյանի օպտիմալ տարբերակ ընտրելու կարևոր միջոց է։

Այսպիսով, այժմ պլանավորման բալանսային մեթոդը կատարելագործելու և կոնկրետացնելու կարևոր ուղիներից մեկը միջճյուղային բալանսների մշակումն ու պլանավորման պրակտիկայում դրանց օգտագործումն է։ Քանի որ միջճյուղային բալանսը մանրամասը կերպով բնութագրում է ժողովրդական տնտեսության ճյուղերի կապերն ու հասարակական արդյունքի շրջապտույտը, այն էկոնոմիկայի վերլուծության և գիտականորեն հիմնավորված պլաններ կազմելու կարևորագույն գործիք է։